ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ. (+374 11) 514 200, Ֆաքս՝ (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

N 01/13-25663

«24» 12 2020 թ.

«ԲԱԶԱԼՏՇԻՆ» ԱԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ
Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ
ՀՀ Կոտայքի մարզ, Գետամեջ, 1 փ. 6-րդ փկղ., 4-րդ արտադրամաս

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրն միակողմանի (մասնակի) լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ԲԱԶԱԼՏՇԻՆ» ԱԿ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև01.11.2019 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/75» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետերի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված տեխ. բնութագրով և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի դահլիճի հարդարման սենյակների և մասամբ սրահի օդափոխության իրականացման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Նշված պայմանագրով աշխատանքների հանձման վերջնաժամկետ էր սահմանվել՝ 31.01.2020 թվականը:

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/75» ծածկագրով պայմանագիրը՝ Երևանի Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի դահլիճի հարդարման սենյակների և մասամբ սրահի օդափոխության իրականացման մասով՝ 63555864 /վաթսուներեք միլիոն հինգ հարյուր հիսունհինգ հազար ութ հարյուր վաթսունչորս/ՀՀ դրամի փոխարեն կատարվել է 59955770 /հիսունինը միլիոն ինը հարյուր հիսունհինգ հազար յոթ հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամի չափով, չեն կատարվել 3600094 /երեք միլիոն վեց հարյուր հազար իննսունչորս/ ՀՀ դրամի չափով աշխատանքներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Վերը նշված պայմանագրերի 3.1.4 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է նշված պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվում է Ընկերության հետ կնքված աշխատանքների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԿԱՏ.՝ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
ՀԵՌ.՝ 011 514-231